37. Տուլիթն էլ չխամբերեց առաւ ուր նետվաներն գնաց մէջ պառաւը մը կուրեկի առանն, ճնճղուկ կզարնէր, ուր ապրուստն էնորով կանէր: Պառաւն էկաւ տէսաւ, որ Տուլիթ ուր կուրեկի առան տափ սաղաղ[1] արիր ի, անիծեց Տուլթին: — Տուլիթն ասաց. ձիկ մի անիծե, պառաւ, մկայ[2] նետվանեղ կտառձուցեմ վէր քե, քե կպանեմ: — Պառաւն էլ ասաց. որտի, կէօ գնայ էնայ խալխուրի կուրկի առտ:

38. Տուլիթն էլ ելթող գնաց ընդայ[3]: Խալխուր ուր տուան առաջ խլնած կանէր, աչքն ինկաւ Տուլիթին, որ մտեր ի ուր կուրեկի առաը: Կանչեց Տուլիթին ասաց «Որտի արե քե օղորկեմ գնայ Ծովասար, Մարութայ բանձր Աստուածածին. որ քըրոյ խէր ինոր բեւլոր պօղպատէ պատան[4] ի քաշե, վէրխւ[5] եղներ ինոր մէջ հէսար արեր ի. գնայ օր մէկ խատ ինոնցեց զարկ կե. ճընճղուկ քե չի՛ կշտացու ցե»:

39. Տուլիթ խասաւ մօտ խալխուր, տանուկ քեաշեց ասաց. «Եա քըրոյ խլնած կկարեմ, եա ձիկ նշանց ալտի տաս Ծովասարու Մարութայ բանձր Աստուածածնայ ճամպախ»: — Էս օր չէլնե, որտի, էս օր ես գըռուծ կանեմ[6]. վաղ կերակի, բան չունեմ, քե կատանեմ էնտեղ: Մէկ ալ օր առեց Տուլիթ գնաց Ծովասարու Մարութայ բանձր Աստուածածին նշանց խտուր, ասաց. «Կէօ էն քըրոյ խօր վանքն ի. գնայ ինչխ գիտես բռկուն արա»:

40. Տուլիթ կնաց էն տեղ տէսաւ որ պօղպատէ պատան քեաշուած ի վանքի բեւլոր, լանկէ մը[7] զարկաւ պատան շրջեց. էրկու խատ վէրխւ ոչխար զարկեց թալեց ուր թեւն. մէկալներ թող տվաւ գնացին սար: Էն էրկու վէրխք բերեց ուր խօրոխպօր կնկանկաց ասաց. «Խոնք իփէք ուտենք. վաղն էլ կբերեմ իմ խօր Ծովասարու վանքից»:

41. Տուլիթ մէկէլ կերակին առեց ուր խօրոխպէր Զէնով Յովան և Թառլան Վէքօն գնաց Ծովասար նէճիր[8] անելու. չուռ երեկուն ֆռացին, անճախ էրկու խատ վէրխւ ոչխար զարկին, էլ երեկուն չկարցան տուն գեալ, մնացին էն տեղ: Զէնով Յովան Թառլան Վէքօն էն տեղ քնան:

42. Տուլիթ նստաւ ուր խամար կրակ արեց, նետվանեղի շըշով քեապապ իփեց չուռ կէս գիշերին: Մէկմէլ տեսաւ որ, Մարութի վանքի մարմար քեար բացուաւ, էրկնուց լըոս էկաւ վեր էն վանքին, Տուլիթն էլ ինոնց ձէն չավեց, էլաւ գնաց վանքը. էն լըոս տէսաւ, խամբերեց փառաւորվաւ:

---

1 Հաւասարեցնել. 2 Հիմայ, այժմ: 3 Այն կողմ:
4 Պարիսպ: 5 Վայրի: 6 Կտաւ գործել: 7 բացի: 8 Որս,